

ՀԱՅ ԵՎ ԱՌՐՔԵՋԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

ՀՐԱՆՈՒՇ ԴԱՐԻՆՅԱՆ

Իրեն սնող ժողովրդական ակունքի նման հստակ ու վճիտ, միաժամանակ՝ հարուստ, բարդ ու խորախորհուրդ է Թումանյանի ստեղծագործական աշխարհը: Ինչ տեսանկյունով էլ քննելու լինեք դարերի ոգին իր մեջ ամբարած ու դեպի դարեր գնացող այդ աշխարհը, որ կողմից էլ մոտենաք նրան ընկնում եք մոգական մի շրջանակի մեջ, ուր ամեն ինչ լուսավորված է մարդու նկատմամբ ունեցած մեծ սիրով, բարության, մարդկայնության հաղթանակի հավատով և այդ ֆոնի վրա հայացքիդ դեմ աշտարակվում է Թումանյան հումանիստի, Թումանյան ինտերնացիոնալիստի վիթխարի կերպարը: Անմեացորդ նվիրումը իր հայրենիքին ու ժողովրդին, մեծ բանաստեղծին հանգեցնում է փիլիսոփայական մի ընդհանրացման, ըստ որի սեփական ժողովրդի բարօրությունը հնարավոր է մյուս ժողովուրդների և, առաջին հերթին, հարևան ժողովուրդների հետ սերտորեն համագործակցելու, խաղաղ ու բարեկամաբար ապրելու սլայմաններում միայն: Եվ ժողովուրդների բարեկամության ամրապնդումը դառնում է Թումանյանի կյանքի ու ստեղծագործության կենսական հարցերից մեկը: Պատահական չէ, որ ամենքի հետ ապրող ու ամենքի չափ տառապող բանաստեղծի հոգին ալեկոծվում ու արյունոտվում էր 1905—1906 թթ. բռնկած ազգամիջյան կոտորածների պատճառով:

Դեպքերի և իրադարձությունների այդ արյունոտ քառսից նա փիլիսոփայական խորազգացություն բառնաճնացնում էր հիմնականը.

1. Ցարիզմի բաժանի՛ր, որ տիրես արյունոտ քաղաքականության կոնկրետ կիրառումը Անդրկովկասում. ռեզոլուցիոնության ուրվականից վախեցած ռուսական բյուրոկրատիան ժողովուրդների համար մի չար խաղ հնարեց, ցանկանալով բաժանել նրանց և դրանով զբաղեցնել նրանց ուշադրությունը», — դրում է Թումանյանը: Եվ ապա՝

2. Ընդգծում, որ ցարիզմի զոհակալների ջանքերով ժողովուրդների միջև ստեղծված թշնամությունն առհեստական է, իսկ սերն ու եղբայրական զգացմունքը բնական ու հավերժական: Այս հավերժական զգացմունքը նա օգտագործում է որպես հզոր զենք խաղաղությունն ու միաբանությունը վերահաստատելու համար:

Ներայրական ընդհարումների ծանր օրերին բանաստեղծը սպիտակ դրոշով շրջում է լոռու և Ղազախի հայ և ադրբեջանական գյուղերում, հորդորում վերջ տալ արյունահեղությունը, անկեղծ, բաց սրտով մոտենալ հարևան ժողովուրդներին, ճանաչել, զնահատել նրանց հոգևոր գանձերը:

Բյուրապատիկ խոցվում էր բանաստեղծի զգայուն հոգին, մարդ-անհատի այլափոխվելու, գազանացած կրքերին այնպես լայն ասպարեզ տալու

համար, Երբեմն էլ թվում էր նրան, թե «Մարդիկ քիչ են, գազանները շատ»², այնուամենայնիվ հավատում էր մաքուր հաղթանակին, լավատեսությամբ նայում ապագային: Բանաստեղծի ամենատես աչքից չէր վրիպում այն առողջն ու բնականը, ազգերի ու մարդկանց փոխհարաբերությունների մեջ, որ անկարող էր եղել ոչնչացնել թշնամանքի թույնը: Նրան մեծ ուրախություն էր պատճառում, որ «դեռ կան լավ հոգիներ», չարի ու չարիքի դեմ պայքարող ազնիվ մարդիկ, որ այդ լավ հոգիներն էլ իրենց ամբողջ փայլով հրապարակ են իջել ավերի ու նախճիրի այդ օրերին: «Առեք հենց թուրքերին ու հայերին: Ես ձեզ էն տեսակ սրտառուլ դեպքեր կպատմեմ,— դրում է Թումանյանը,— և շա՛տ ու շա՛տ դեպքեր թուրքերի ու հայերի հարաբերություններից, էն տեսակ սրտալի եղբայրական վերաբերմունք, թե՛ թուրքի, թե՛ հայի կողմից, որ կզարմանաք: Եվ էդ էլ էն ժամանակ, երբ վատությունն ու կոտորածը ամեն կողմից քաջալերվում է ու բորբոքվում, իսկ լավությունն առնել արգելվում, նույնիսկ մահվան սպառնալիքով արգելվում»³:

Կյանքի ամենասև, մոռյլ էջերում անգամ Թումանյանը տեսնում է լուսավոր, պայծառ կետեր, փաստեր, որոնք վկայում են, թե ինչպես ժողովուրդները կարողանում են պաշտպանել մեկը մյուսին՝ ընդդեմ իշխանավորների: «... 1905 թվի աշնանն էր, թուրք-հայկական ընդհարումների ամենակատաղի ժամանակը: Ես իմ հայրենիքում էի—Լոռու սարերում,— գրում է Թումանյանը:— Մենք մի ժողով արինք ու որոշեցինք, թե՛ լուսեցիներս չենք կոչում մեր հարևան թուրքերի հետ, որովհետև եթե ուժեղ ենք՝ անխղճություն է դա, իսկ եթե թույլ ենք՝ հիմարություն է: Բարձրացնում ենք սպիտակ դրոշակ և աշխատում ենք սերն ու խաղաղությունը պահել մեր սարերում ու ձորերում»⁴:

Հասկանալի է, որ Թումանյանը ժողովուրդների բարեկամությունը քարոզում էր ոչ միայն իբրև քաղաքացի ու հրապարակախոս, այլև՝ որպես մեծ գեղագետ, որպես իր ժողովրդի ձայնի արտահայտիչը գրականության մեջ: Հենց վերը բերված տողերը, որ այնքան դիպուկ են բնորոշում Թումանյան քաղաքացուն, նրա «Ալլահից ղրկված»-ը պատմվածքի պրոլոգն է: Բազմակետերով արտահայտված գեղարվեստական փոքրիկ դադարից հետո սկսվում է բուն պատմությունը. իրական մի դեպքի վերհուշ, որն իր անպաճույճ պարզության մեջ հասել է գեղարվեստական մեծ ընդհանրացումների, գաղափարի և զգացմունքի արտահայտման բյուրեղային հստակության:

Հանդարտ պատումը ընդհատվում է, և հեղինակը ընդամենը մեկ-երկու տողում կարծես վրձնում է ազգամիջյան կոռիվների մղձավանջային օրերի կենդանի պատկերը. դատարկ, լքված կայարան, ձորի երկարությամբ ոռնացող նոյեմբերյան ցուրտ քամի: Ճանապարհի մեջտեղը, երեսը հակառակ կողմ կանգնած է մի մարդ, «...կանգնած է օտար, մենակ, դատարկ, հառելի ձորում...»⁵: Փախածներից մինն է..., նրա մասին այսքան գիտենք միայն: Մոռյլ է պատկերը, անդորրը խաբուսիկ. չարագույժ ամայության բոթ է կախված օդում: Մի փոքրիկ վրձնահարված՝ ձորը լցված մարդկային ոտնաձայններ,

² Հոփհ. Թումանյան, ԵԺ, հ. 5, Երևան, 1945, էջ 303:

³ Հոփհ. Թումանյան, ԵԺ, հ. 4, էջ 417:

⁴ Հոփհ. Թումանյան, ԵԺ, հ. 3, Երևան, 1949, էջ 86:

⁵ Նույն տեղում:

և խավարն ավելի է խտանում ամայի ձորում կանգնած հուսալքված անծանոթի շուրջը: Թվացող անդորրն արդեն հղի է ամպրոպով, որը չի ուշանում պայթել: «Մեր ձիաններից մինը խրխնջաց,— պատմում է հեղինակը:— Նա (անծանոթը—Հ. Դ.) ետ նայեց, տեսավ զինված մարդկանց բազմությունը, տեսավ ինձ, որ գնում եմ ուղիղ իրեն վրա ու սարսափահար տեղիցը թռավ... թռավ, բայց ուր գնա... Մտավ կայարանի դռան տակն ու կուչ եկավ»:

Լույսի մի բարակ շող փորձում է ցրել ահասարսուռ խավարը՝ «—Մի՛ վախիր, մի՛ վախիր...»⁶,— հնչում է գրողի ձայնը: Սակայն սարսափը չի հաղթահարվում: Սկսվում է լույսի ու խավարի գոտեմարտը: Լույսն ավելանում է.

«Մի՛ վախիր... ինչո՞ւ ես վախենում... ամոթ չի՞...? Բայց՝ ձեռքս իմ բառերը չէր լսվում, բառաչում էր ավելի զարհուրելի, և երբ իրեն հասա, անխուսափելի օրհասը տեսնելով առաջին մի վայրկյան ուզեց մի բանով պաշտպանվել և, ասես թե հանկարծ հիշելով, ձեռքը տարածեց դեպի ջինջ կապույտ երկինքը ու սպառնալի աղաղակեց.

— Ալլահ...»⁸:

Բողոքում է մարդը աշխարհի գայլային օրենքների դեմ, բողոքն ու ցասումը խտացնելով մի բառում՝ Ալլահ:

Ուժեղանում է լույսը, նոր երանգ ստանում, գտնում անծանոթի սրտի ճանապարհը:

«—Ալլահը կա հապա՞... Քանի որ նա կա՝ ինչի՞ց ես վախենում, վեր կաց»⁹: Մութ ամպերը սկսում են ցրվել. լույսը հույսի է փոխարկվում. անծանոթը պատրաստ է հաշտվելու նույնիսկ դաժան Ալլահի հետ՝ Ալլահ վառ: Ինչպես խեղդվողն է բռնում փրփուրից, նա էլ կառչում է հենց նոր իր իսկ մերժած Ալլահից:

Սառած, դողահար մարդը քայլելով իր փրկարարի կողքին, փղձկում է, արտասվում: Սարսափը հաղթահարված է արդեն (անձրև եկավ, երկինքը կպաքզի): Մարդն արդեն ի վիճակի է ընկալելու շրջապատը:

Խավարի դեմ պայքարի են նետվում նոր ուժեր: Ասպարեզ է մտնում մեր ժողովրդի ազգային բնավորության լավագույն գծերից մեկը՝ հյուրասիրությունը, հյուրին պատվելու, հարգանք մեծարելու դարերով սրբազործված սովորությունը, որն անխախտ օրենքի ուժ է ստացել:

«—Ինչո՞ւ ես լաց լինում, ումի՞ց ես վախենում... դու մեր ղռախն ես... մեր ախպերն ես...»¹⁰: Սա արդեն ախպիսի վուլան է, որ ինչպես ասում են, բարն էլ կծակի: Ու ամրանում է հույսը անծանոթի սրտում: Ի միջի այլոց՝ նա այնքան էլ անծանոթ չէ, ինչպես թվում էր առաջին պահին: Ժողովրդի մեջ նրան ճանաչողներ կան, բարևում են, հանդիմանում.

«—Այ մարդ, չես ամաչո՞ւմ, լաց ես ըլում.

Փառք աստծու, ազատվել ես՝ էլ ինչի՞ ես լաց ըլում. ամոթ չի՞:

— Ձեռ դուրբան, ես ձեր ախպերն եմ.

— Իճարկե մեր ախպերն ես...»¹¹:

⁶ Նույն տեղում, էջ 87:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, էջ 88 (այստեղ և այսուհետև ընդգծումները մերն են—Հ. Դ.):

Մեծ գրողը վարպետ փորագրիչի նման դրվագ դրվագի հետևից կերտում է Բայրամի հոգու ելևէջները, որտեղ ամենաանշան նրբերանգն անգամ ծառայում է հիմնական գաղափարի բացահայտմանը:

Պատմվածքի առաջին տողերում հերոսը ներկայացված է շատ լակոնիկ, բայց և շատ ընդհանուր մի բնորոշումով՝ «փախածներից մինն է»։ Նկարագրվող հանգամանքներում սա ամենատիպիկ ու սպառիչ բնութագիրն է: Գործողությունների ծավալմանը (որն ավելի ներքին զգացողություն է, քան արտաքին շարժում) զուգընթաց կոնկրետանում է նաև հերոսի կերպարը: Նա արդեն ոչ միայն անուն ունի, այլև բնավորություն, նույնիսկ՝ կենսագրություն, որը շատ ընդհանուր լինելով իր նմանների համար՝ իրենն է միայն:

Տաք սենյակում, ճարճատող վառարանի մոտ նստած է հոգնած, ուժասպառ, մահից մազապուրծ եղած Բայրամը՝ իր ճակատագրով ու հոգսերով: Հիմա նա հավատում է իր փրկությանը, հավատում է ժողովուրդների եղբայրության ուժին: Թեև երկու օր հաց չի կերել, բայց հրաժարվում է ուտելուց: Սովից, հոգեկան ու ֆիզիկական տառապանքից թուլացած Բայրամը բնազդորեն, զգում է, որ այստեղ կարևորը հացը չէ: Նրա ծանրացած ուղեղը փորձում է թափանցել ողբերգականի էություն մեջ, վերլուծել իրադրությունը, ընդհանրացնել զգացածը, ապրածը ու կամաց, ասես ինքն իր հետ, խոսում է. «Պարսկաստանի խորքերից վեր կացա, եկա աշխատանք անեմ, քուլփաթ պահեմ, էս պատահեց...»¹²:

Եվ այսպես, կարծես ի միջի այլոց ասված խոսքի մեջ բացվում է ժամանակաշրջանի ողբերգության բուն էությունը՝ ավերի ու նախնիների գոճ ենդառնում խաղաղ աշխատանքի մարդիկ: Բայրամի սահմանափակ, շարժարկված միտքն ավելի հեռուն չի գնում ու նորից կանգ է առնում Ալլահի վրա: Նա գլուտ արածի նման բացականչում է.

— Ամենքս ալլահով մին ենք:

— Մին ենք¹³,— հաստատում է բանաստեղծը:

Ալլահը Բայրամի համար հավերժական անձեռնմխելի կուռք չէ: Սկզբում նա զայրույթով բողոքում է Ալլահի դեմ, ձեռքը երկինք պարզած սպառնում նրան՝ ահավոր կոտորածների պատճառին: Ապա ուղեղի մութ ծալքերում ինչ-որ միտք է առկայծում՝ ալլահը մեղավոր չէ, և օրհասական պահին օգնության է կանչում ալլահին, փորձում դաշնակցել նրա հետ: Եվ վերջապես՝ «Ամենքս ալլառնով մին ենք... նա է քեզ ղրկել»¹⁴,— բանաձևում է Բայրամը, դիմելով իր փրկարարին: Այստեղ արդեն նրա մեջ ինքնապաշտպանության բնազդը չէ խոսողը, այլ հաստատ համոզմունքն՝ այն բանի, որ բոլոր մարդիկ հավասար են, որ այս արյունոտ շարիքի աղբյուրը պիտի փնտրել ուրիշ տեղ և, հանգստացած այդ գիտակցությամբ, խաղաղ քնում է: Պատմվածքի վերջում, խավարի հետքն անգամ չի մնում, համատարած լույսի թագավորություն է, լույսի հաղթանակ:

«Նա քնեց: Ես նայում էի նրան և ինձ թվում էր, թե նա հանգստանում էր ալլահի հովանավորության տակ, որ ասես թե նայում էր վերևի ջինջ կապույտից, իսկ ես նրան պահապան էի կարգված, որ ոչ ոք չխանգարի Բայ-

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում, էջ 89:

¹⁴ Նույն տեղում:

րամի հանգիստը: Նա այն ընդունեց զգուշ էի իմ պաշտոնի ամբողջ վեհաժողովուրդը և ոչ ոք չէր կարող խանգարել նրա հանգիստը»¹⁵:

Պատմվածքը, որ ամբողջովին ներծծված է ջերմ հումանիզմով, ավարտվում է հաղթական տրամադրությամբ, ժողովուրդների բարեկամության հավերժության հավատով:

Իսկ չարի՞քը: Այնուամենայնիվ, որտե՞ղ որոնել չարիքի արմատը: Այդ մասին բարձրաձայն չեն խոսում ո՛չ գրողը, ո՛չ էլ նրա հերոսը: Հիշենք, որ «Ալլահից ղրկված» պատմվածքն առաջին անգամ լույս է տեսել 1911 թ., երբ երկրում դեռ իշխում էր սև ու սպիտակ, երբ պատվում էր ամենափոքր համարձակությունն անգամ: Այդ պայմաններում, բնականաբար, ավելին անել հնարավոր չէր: Հեղինակը լայն ասպարեզ է թողնում ընթերցողին մտածելու, խորհելու համար և ընթերցողը հասկանում է նրա լուռ մտահոգությունը, զայրույթով լցվում խաղաղ ժողովուրդներին իրար դեմ հանող ցարիզմի հանդեպ:

Նույն տրամադրություններով է հագեցած նաև «Ահմադը» նովելը, թեև այնտեղ ոչ մի ակնարկ չկա ազգամիջյան կոիվների մասին: Խաղաղ օրերի մի իդիլիկ պատկեր է այն, երկու ժողովուրդների համատեղ կյանքը պատկերող մի նրբահյուս «ժանյակ», որտեղ հայի ու ադրբեջանցու կյանքն այնպես է միահյուսված, որ դժվար է զատել իմ ու քո-ի սահմանը:

Նովելի հերոսն այսպես է ներկայանում. «Ես իմ մանկության գարունները անց եմ կացրել մեր սարերում:— Շատ էի սիրում իմ տատոնց ու միշտ այնտեղ էի լինում: Իմ քեռիներից ամենից փոքրը՝ Ահմադը, հովիվ էր»¹⁶:

Սա ընթերցողի առաջին հանդիպումն է հերոսի հետ, ապա տող առ տող նովելի ու ավելի է ընդգծվում հերոսի հարազատ լինելու հանգամանքը:

«Ահմադը թուրքի անունն է...» (նկատենք՝ ոչ թե Ահմադն է թուրք, այլ անունն է թուրքի—Հ. Դ.).

Ու նորից՝ «Ինձ հետ, անունը լսողը կասե՛ր քուր՛ք է, ընդհանրապես հենց ներս մտնե՛ր տեսնե՛ր թե Ահմադը ինչպե՛ս է ծած գալի տանը, հերիք էր, իսկույն կիմանար, որ նա տան սիրելի տղան է»¹⁷: Ահմադը այնքան է սիրված և այնպես է սիրում բոլորին, որ դժվար է հավատալ, թե նա այդ ընտանիքի անգամը չէ, առավել ևս՝ որ նա այլազգի է: Այս իմաստով հատկապես բնորոշ է նովելի երկրորդ մասը, որը հարազատների հրաժեշտի մի սրտառու տեսարան է: Տան մեջ բոլորը տխուր ու գլխիկոր են, արտակարգ հուզումից մի տեղ նստել չեն կարողանում, ներս ու դուրս են անում, միայն պապն է խոսում. «Աստված լինի քո օգնականը բալա ջան... Չոր քարին զնալիս՝ չոր քարն էլ կանաչի քեզ համար: Պակաս օրդ խնդությունով անց կենա... Դե, վեր կաց, օրն անց է կենում, ճամփեդ երկար է: Վեր կաց, բալա ջան, աստված բարի ճամփա տա...»¹⁸:

Նորից գրկախառնություններ, արցունքներ, մաղթանքներ, ու Ահմադը «...մի երկու կով, հորթ, գոմեշ, ձագ, մի կտրկան ոչխար, մի բարձած էշ ա-

15 Նույն տեղում, էջ 88:

16 Նույն տեղում, էջ 65:

17 Նույն տեղում:

18 Նույն տեղում, էջ 66:

ռաջն արած, մի երկու շուն էլ ետը գցած, ճանապարհ ընկավ: Մյուս ֆեռի-նեթս ուղեկցում էին Ահմադին¹⁹:

Իմաստի խտացման և գեղարվեստական հնարանքի առումով հատկապես ուշագրավ է նովելի վերջին մասը, որը լավագույն օրինակն է այն բանի, թե ինչպես կարելի է գրել մի բան և տաղանդի ուժով ստիպել, որ ընթերցողը կարդա բոլորովին հակառակը:

Առաջին և երկրորդ մասերի ներքին լարումով լի հեղինակային հանդարտ պատումը տեղի է տալիս մի սրընթաց երկախոսության, Ռիթմի այդպիսի փոփոխությունն արդեն ընթերցողին նախապատրաստում է ինչ-որ արտակարգ բանի: Կարծես անամպ երկնքից կարկուտ պիտի թափվի. «Ահմադը անցավ սարի մյուս կողմը, մյուս քեռիներս վերադարձան»:

Մինչև այստեղ ամեն ինչ, գոնե արտաքուստ, խաղաղ է. սյուժեն ընթանում է իր հանդարտ հունով. ծնողները և հարազատները օտարություն ճամփեցին իրենց հարազատին և տխուր վերադարձան տուն: Թվում է թե գործողությունն ավարտվեց արդեն: Բայց... անհանգիստ է ընտանիքի ամենափոքր անդամը՝ թոռնիկը, և այդ անհանգստությունից էլ նորից ինտրիգվում է գործողությունը, նոր՝ սրընթաց ռիթմ ստանում և արագ, գրեթե անսպասելիորեն, հանգուցալուծվում:

Հարցերը տանջում են փոքրիկին, ինչու՞ են բոլորը լաց լինում իրենց տանը, ո՞ր գնաց քեռի Ահմադը:

«— Իրենց տուն գնաց»,— ասում է տատը: Փոքրիկը զարմանքից շշմել է, ոչինչ չի հասկանում. «— Իրենց տունը ո՞րն է», «Ահմադը ո՞վ էր որ...»:

Պատասխանն անհավատալի է.

«— Ահմադը թուրք էր... մեր ծառան էր: է՛, քանի տարի մեր տանն էր... Հիմի իր իրավունքն առավ ու գնաց...»²⁰:

Թոռնիկը կարծես կայծակնահար է լինում՝ ինչպե՞ս թե, իր ամենասիրելի քեռի՞ն... Այնուամենայնիվ դա չի տեղավորվում նրա փոքրիկ ուղեղում և մի տեսակ խեղճացած, ինքն իրեն կորցրած հարցնում է՝ «— Բա էլ չի՞ գալու»²¹: Ու հարցման տոնի մեջ մի գաղտնի հույս է զգացվում թե՛ հենց նոր լսածները սուտ են, թե դա լինելու բան չէ, ու հիմա կասեն, որ Ահմադը՝ իր ամենասիրելի քեռին, վերադառնալու է շուտով: Բայց ուրիշ է պատասխանը. «— Չէ՛, բալա ջան, գնաց...»:

Այսպես էլ ավարտվում է նովելը: Բայց այսպես ավարտվում է թղթի վրա, ընթերցողի մտքում դեռ շարունակվում է խմորումը. երևութականը իր տեղը զիջում է աներևութին, տողամիջում ասված, չգրված ենթատեքստին:

Ասվածը պարզելու համար, նորից դառնանք ամենահիմնականին՝ հերոսների փոխհարաբերությունը գնահատող, բնութագրող նախադասությանը՝ «Ահմադը թուրք էր, մեր ծառան էր»: Այս բառերը ասվում են հանդարտ, մի քիչ էլ անտարբեր ձևով, կարծես թե վաղուց հայտնի մի ճշմարտություն է, որ լրացուցիչ բացատրությունների կարիք չունի և պետք է հենց այդտեղ էլ վերջացնել: Սակայն ծեր գեղջկուհին, ինչպես ամեն մի

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում, էջ 67:

²¹ Նույն տեղում:

վշտոտ մարդ, ցանկություն ունի խոսելու ու շարունակում է խոսքը, բայց արդեն այլ ինտոնացիայով.

«Է՛, բանի տարի մեր տանն էր... հիմի իր իրավունքն առավ ու զնա՛ց...»։ Փորձեք փոխել ինտոնացիան. հանեք երկարացման նշանները ու կախման կետերի փոխարեն վերջակետ դրեք, կփոխվի նաև միտքը։ Այն կդառնա նախորդ նախադասության տրամաբանական շարունակությունն ու հաստատումը, մինչդեռ այստեղ ինտոնացիան այնպիսին է, որ փաստորեն ժըխտում է առաջին նախադասությունը։ Խոսքի մեջ հուզական խիստ շեշտ է մանում, ու թվում է ուր որ է պառավը կփղձկա։ Նա էլ թոռնիկի նման մխիթարանքի կարիք է զգում, ու վերջում՝ «Զէ՛, բալա ջան, զնա՛ց...-ը» որդեկորույս մոր այնպիսի վշտով ու անփարատելի մորմոքով է ասում, որ նրա այնքան հաստատուն ասած բառերը, թե Ահմադը այլազգի է, իրենց ընտանիքի անդամը չէ, հավիում, ցնդում են այդ վշտից, ու տեղը մնում է ճշմարտությունը՝ Ահմադը նրա հարազատ զավակն է, որդիներից ամենից փոքրն ու ամենից սիրելին։

Թումանյանը, ինչպես միշտ, շատ խստապահանջ է բառի նկատմամբ։ Տեղին է նկատել, որ նրա համար ոչ միայն բառն է մի ամբողջ աշխարհ, այլև կետը, հարցականը, երկարացման նշանը, բաղմականները և այլն, որոնք Թումանյանի մոտ իսկապես կախարդական զորություն են հասնում, փոխելով «բառ-աշխարհների» ուղղակի իմաստը։ Գեղարվեստական-գաղափարական ամբողջությունը խաթարող ոչ մի ավելորդ խոսք, ոչ մի ավելորդ բառ չէր հանդուրժում հեղինակը։

«Ահմադը» առաջին անգամ տպագրվել է 1908 թ. (գրության տարեթիվն անհայտ է)։ Ուշագրավ է, որ 1909 թ., երկրորդ հրատարակության առիթով, որոշ խմբագրական շտկումներ անելով տեքստում, գրողն անհրաժեշտ է համարել ամբողջովին կրճատել առաջին տարբերակի վերջաբանը։ Ահա այն ամբողջությամբ։

«Շատ տարիներ անցկացան։ Ծն մի անգամ էլ պատահեցի Ահմադին։

1905 թվին, հայ-թուրքական կռիվների ժամանակ, մի ծերունի թուրք սպանվելուց չէր վախեցել, անց էր կացել հայ գյուղերը, եկել նստել էր իմ աստոնց դռանը մի քարի վրա ու լաց էր լինում։

Մեր հին Ահմադն էր, բարի ծերունին»²²։

Առաջին հայացքից թվում է, որ այսպիսի վերջաբանը շատ անհրաժեշտ է ցույց տալու համար, թե հարազատ արյունը ջուր չի դառնում և որ հրով ու սրով չես բաժանի հարազատներին։ Դա, իհարկե, այդպես է։ Բայց Թումանյանը չէր կարող հենց այնպես վերցնել և դեն նետել պատմվածքի մի ամբողջական հատված, նույնքան անհրաժեշտ թվացող, որքան և մյուս մասերը։ Բանն այն է, որ այս վերջաբանը թուլացնում էր պատմվածքի էմոցիոնալ շիկացումը, ժողովուրդների բարեկամության հոգեհարազատության լայն հարցերը տանում դեպի մասնավոր դեպքի, մասնավոր փաստի ոլորտը, այն գրկում էր մեծ, համապարփակ նշանակությունից։

Կա մի ուրիշ հանգամանք ևս։ Հիշենք, որ Թումանյանը 1905—1906 թթ. ազգամիջյան կռիվների մասին, դեպքերի անմիջական ազդեցության տակ, գրել է. «Հիրավի այսքան տգեղ, այսքան լիրբ, այսքան անիրավ, հրեշական»։

²² «Հասկեր», 1908, № 7, էջ 250։

կռիվ ինչ որ թուրք-հայկականն է— դժվար թե հղած լինի: Գուցե նախապատմական շրջաններում, երբ որ մարդիկ իրար ուտում էին»²³, «Ահմադում» նա մտածված կերպով խուսափում է այդ արյունոտ դեպքերի հեռավոր հիշատակումից անդամ, չհանդուրժելով ոչ մի ստվեր, թեկուզ և վերհուշի կարգով, նովելում իշխող համակ սիրո ու բարեկամության լույս աշխարհում:

Ոչ մի ավելորդ բառ, հուլզի, մտքի, զգացմունքի առավել խտացում. այսպիսին է թումանյանական արվեստը՝ գերող, առինքնող, իր պարզության մեջ խորախորհուրդ արվեստը:

* Ազգամիջյան կռիվների պատճառով խաթարված հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության վերականգնումը Թումանյանի համար կենսական նշանակություն ունեցող հարցերից էր, գուցե և ամենակենսականը տվյալ իրադրության մեջ. «... Ամեն ջանք շարունակ գործ եմ դրել մեր գավառներում խաղաղությունը պահելու և կոտորածների առաջն առնելու, նվաճող բռնության գոհ չեմ, որ դրականության մեջ մի որևէ բան եմ արել որքան գոհ եմ, որ ակներև կարողացա իրար դեմ կանգնած ժողովուրդների սրերը պատյան դնել տալ և շատ ու շատ անմեղների ազատել այս գաղանական կոտորածից»²⁴:

Իր կյանքի հետագա տարիներին ևս Թումանյանը գրչով ու գործով միշտ կանգնած է եղել հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության համար մարտնչողների առաջավոր դիրքերում: 1918—1920 թթ. նա բողոքում էր Անդրկովկասյան ազգայնական կուսակցությունների հակաժողովրդական քաղաքականության դեմ, հայերին, ադրբեջանացիներին և վրացիներին կոչում համերաշխության ու եղբայրության:

Մեծ բանաստեղծը ցնծությամբ ողջունեց Սովետական իշխանության հաստատումը Անդրկովկասում, դրա մեջ տեսնելով ժողովուրդների բարեկամության անխախտության առհավատչյան:

ДРУЖБА АРМЯНСКОГО И АЗЕРБАЙДЖАНСКОГО НАРОДОВ В ДВУХ РАССКАЗАХ О. ТУМАНЯНА

ГРАНУШ ДАРБИНЯН

Р е з ю м е

Гуманизм и идея дружбы народов—одна из характерных черт творчества О. Туманяна, что с особой силой проявилось в рассказах «Посланник аллаха» и «Ахмед», отражающих дружбу азербайджанского и армянского народов.

В статье раскрываются идейно художественные особенности этих рассказов.

Произведения О. Туманяна на тему дружбы армянского и азербайджанского народов сыграли большую роль в укреплении их братских связей.

²³ Հոգի. Թումանյան, Եժ, հ. 5, էջ 298—299:

²⁴ Նույն տեղում, էջ 298: